

ՔԱԺՆԵԳԻՆ

Տարեկան

100 Ղրուե

Վեցամսեայ

50 Ղրուե



# ՊԱՏՐԱՍ

V. KIBRISLIAN

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ ԻԶՄԻՐԻ ՀԱՅ ՊՕՅ-ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ

**BADRASD**  
Organe des Boy-Scouts Arméens.  
de SMYRNE

**ΜΗΑΔΡΑΣΤ**  
ΟΡΓΑΝΟΝ ΤΩΝ ΑΡΜΕΝΙΩΝ ΠΡΟΣΚΟΠΩΝ  
ΣΜΥΡΝΗΣ

ՆԵՐԿԱՅ ՄԱՆՈՒԿՆ Է ԱՊԱԿԱՅ ՄԱՐԴԷ

ABONNEMENT

Annuel

10 Frcs.

Six-mensuel

5 Frcs.

Direct. et Ger. Resp.  
PETER COUYOUMDJIAN

Adresse  
BAKIRGIAN FRÈRES

Bureaux  
SCOUT-ROOM ARMEEN.

Պատճ. եւ Պատ. Տնօրէն  
ԻԹԵՐ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Հասցէ

ՊԱՔՐՃԵԱՆ ԵՂԲԱՐՔ

Գրասենեակ

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՏՈՒՆ

Հասը 5 Ղրու.

Հասը 5 Ղրու.

### ՍՈՒՅԿԱՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ Հ. Մ. Չ. Մ. Ի ԼԻԱԶՕՐԻՆ ՇԵՏ

Մեծ հրճուանքով է որ իմացանք  
ներկայութիւնը մեր մէջ Հ. Մ. Չ.

Մ. Ի լիազօր Պատուիրակ՝ Պր. Թաղէ-  
ս Մեծատուրեանի որ եկած է Հայ  
Պոյ-Սկաուտներու այնքան ցանկալի  
նդհ. միութիւնը՝ իրագործելու:

Պր. Թաղէս Մեծատուրեան կա-  
նուցի է ըսել ճշմարիտ ծեր սկաուտ  
նը է: Տագորուած սկաուտական ի-  
րապաշտ գաղափարներով և հայրե-  
կանական վառ զգացումներով, տն-  
այսպէս կը ներշնչէ մեզ իւր հաւատք  
ը իր ստանձնած փափուկ պաշտօնին  
ընդդ. թեան շուրջ:

Ուստի փութացի անմիջապէս տե-  
սակցութիւն մը խնդրելու իրմէ զօրս  
իրայօժար ընդունեց.

— Սկաուտական ինչ հանգաման-  
քով եկած էք իզմիր:

— Ինձ տրուած է լայն իրաւասու-  
թիւն իզմիրի սկաուտական և մարմ-  
նակրթական միութիւններուն հետ  
վերջնական համաձայնութեան մը գալ  
նդհ. միութեան մը համար:

— Ձեր ցարդ կատարած տեսակ-  
ցութիւնները ինչ արդիւնք տուին:

— Ես տեսակցութիւններ ունեցայ  
Իզմիրի Հայ Պոյ-Սկաուտներու ընդհ.  
պետ Պր. Մ. Եանըզեանի հետ և ու-  
րախ եմ յայտնելու որ շատ լաւ տը-  
պաւորութիւն կրեցի թէ իր անհա-  
տական և թէ տեղւոյ սկաուտա-  
կան կազմի շուրջ իր տուած ընդհ.  
տեղեկութիւններէն:

— Կը յուսա՞ք շուտով իրագործել  
նդհ. միութիւնը:

— Որովհետեւ տեսնուեցայ նաև  
Ձեզի հետ ու վստահ ըլլալով Ձեր  
սկաուտական արտայայտութեանց, այն-  
պէս համոզուեցայ թէ մեկնելէս առաջ



Հ. Պ. Ս. Մ. Ի Տրոյ բաճակը  
(Ազգ. Կեդր. Որբանոց)  
La 8me troupe des Boy-Scouts Armén. de Smyrne

արդէն ընդհ. միութիւնը վերջացած  
հարց մ'է: Քանզի մեր մէջ ունէ ան-  
հասկնալի հարցեր չ'կան բացի մի քա-  
նի ձևերու տարակարծութիւնէ զօրս  
շատ դիւրութեամբ կարելի է կար-  
գադրել:

— Ներկայ գտնուեցա՞ք Հայկական  
Ֆութպօլիս խումբին ունէ մէկ մրցման:

— Այո՛, անցեալ կիրակիի մրցման  
ներկայ եղայ և ի պատիւ խաղացող-  
ներուն պէտք է յայտնեմ որ Հայ Տը-  
ղախները շատ կարգապահ եին և ես  
այդ կարգապահական ոգին կը յանձ-  
նարարեմ նոյնիսկ Պօլսոյ կարգ մը  
Ֆութպօլիսի ընկիւրներու խաղը տար-  
ուեցաւ շատ անշուք և առանց ունէ  
միջադէպի. իմ խնդակցութիւններս  
այս առթիւ:

— Տեսնուեցա՞ք արդևօք մեր Հայ  
Ֆութպօլիստներուն հետ:

— Այո՛, տեսնուեցայ կարգ մը  
խաղացողներու հետ, որոնց ի կարգին  
Յարէթեան Եղբարք կայն. անոնք ալ  
այն կարծիքէն էին թէ պէտք է Հայ

Մարմնակրթական Ընդհ. միութիւն մը  
ներկայացնէ ընդհ. ճակատ՝ օտարներու  
առջև:

— Կը հաճի՞ք մի քանի տեղեկու-  
թիւններ տալ Պօլսոյ Հայ սկաուտա-  
կան գործունէութեան շուրջ:

— Մեր Պօլսոյ սկաուտական կազ-  
մը շնորհիւ սկաուտական յանձնա-  
խումբին և խմբագրութեան բաւա-  
կան յառաջացած է սկաուտական ճշ-  
մարիտ ոգւոյ կիրարկման մէջ առանց  
առաջնորդուելու արտաքին ձևակա-  
նութիւններէ ինչ որ շատ անգամ ըս-  
կաուտական ոգւոյ հակառակ է:

Մեր տղաքը նոր թափով մը վե-  
րակազմուած են և նոր վարչութիւնը  
իր ոյժը կը թափէ վերակազմութեան  
գործը աւելի ընդլայնելու նիւթապէս,  
բարոյապէս և ֆիզիքապէս:

Շնորհակալութիւն յայտնելով թո-  
ղուցի Մեր Սկաուտը իր աշխատան-  
քին մէջ:

ՉՍԻՆ ՅԱԲԵԹԵԱՆ

ՀԱՅ ՊՕՅ-ՍԿԱՈՒՏՆԵՐ. Առիթ մը  
տեսաւ քարի գործ մը կատարելու.

«Պատրաստ»ը և «Հայ Սկաուտ»ը  
սպասելով պիտի օգնէք սկաուտիզմի  
գաղափարները և սկզբունքները տա-  
րածելու ներկայ երկրասարգութեան  
մէջ և ձանձնեցնելու զանոնք ժողովուր-  
դին:

Եթէ բաժանորդ չ'ես, շուտով ար-  
ձանագրուէ:

Եթէ բաժանորդ ես, ստիպէ բա-  
րեկամներդ քու օրինակիդ հետեիլ:

Եթէ մեր բաժանորդներէն իւր-  
քանչիւրը նոր բաժանորդ մը ներկա-  
յացնէր մեզ, մեր բաժանորդներուն  
թիւը կրկնապատկուած պիտի ըլլար:  
ԼԱ ՔԱԼԻՍ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

# ՄՏԱԾՈՒՄՈՎ ԵՒ ԳՈՐԾՈՎ ՄԱՔՈՒՐ

Ս Կ Ա ՈՒ Տ Ա Կ Ա Ն 11րդ ՕՐԷՆՔ

Այս է սկսուտին տրուած պատուէրներէն մին, որ ինքնին արդէն կը պարունակէ ամբողջ իմաստ մը, որ կարիւր է ըսել առանձինն առանց բացատրութիւն աւելցնելու, ամբողջ արտայայտութիւն մ'է այն՝ որ երիտասարդին կը թելադրուի և որ անհրաժեշտօրէն պատանի հոգին յատկանշող ազնիւ արժէքը պէտք է կազմէ:

Չկայ գործ մը առանց մտածումի. մտածումը գործին սկիզբն է, և եթէ ասիկայ ըլլայ անկեղծ, մաքուր, ջինջ և ոչ ապականուած ու խաթարուած ռեզոլուտի յաջորդող գործն ալ կ'ըլլայ մաքուր, արժանի գնահատանքի և զերծ դատապարտելի թերութիւններէ:

Ըսինք թէ մտածումն նախքան գործը ռեզոլուտ է այս վերջնոյն, սակայն պէտք է նկատել որ մանուկը կամ պատանին նախ կը իւրացնէ իր շրջապատին յատկութիւնները, ինչո՞ւ համար իրոււածը կ'ըսուի թէ բարեկիրթի մը զուտը շատ քիչ անգամ ապականած դուրս կ'ուզայ, ինչո՞ւ համար է որ դաստիարակներուն մէջ բարոյական կատարելութեամբ օժտուած անձինք կը պահանջենք, պարզապէս անոր համար որ անոնք կենդանի ռեզոլուտներն են պատանին դէպի ապագան առաջնորդող:

Զի բաւեր երբեք բարոյականիսօսֆեր գրի սուկեղ եւ խօսիչ, այլ գործքով, վարուելակերպով հաստատելու և իբրև բարի օրինակ հանդիսանալ պէտք է իր շրջապատին մէջ այն անձը՝ որ եզակի տեղ մը գրաւելու կոչուած է:

Ահա այս հիման վրայ, պէտք է նոր սերունդը շրջապատել բարոյական մթնոլորտով մը, եթէ իսկական մարդը ի յայտ բերելու ձգտումն ունինք:

Այսպէսով է որ տղան պիտի ներշնչուի լուսագոյն գործերէ, լուսագոյն շրջապատէն և սաղմը բերրի պիտի ըլլայ ապագային երբ չափահաս դառնայ: Պատանեկութեան կրած տպաւորութիւնները մարդուն մտածումին հիմը պիտի կազմեն, չի՞ տեսնուիր ակնյայտնօրէն տարբերութիւնը քաղաքակրթութեան մէջ ծնած ու մեծցած և կիսավայրենիներու մէջ ապրած թղուն միջև. անտարակոյս և բնականօրէն հոգիներն ալ բարոյական արժէքի տեսակէտով գանազանութիւններ ունին, նայած իրենց միջավայրին և կրած տպաւորութեանց:

Սկսուտիցմը կը ջանայ մաքուր գործեր ցուցադրել և ասոնք պիտի կազմեն որպէս ռեզոլուտի իր չափահասի մտածումներուն, որմէ յետոյ այլևս իր մէջ կազմուած կամ սովորութիւն գարձած լաւ մտածելակերպը մղիչ ոյժը պիտի ըլլայ մաքուր գործերու:

Դարեր առաջ ապրող փիլիսոփայ Տէգարդ՝ մարդուն մտածելու կարողութիւնը միակ բարին կը համարէր, ասով մարդիկ ազատ են, կ'ըսէր ան առաջնորդելու ինքզինքնին կեանքի ընկերութեան մէջ, բայց թէ չ'պիտի մոռնանք մեր վերև յիշած պարագան՝ նախնական տպաւորութիւններու, գեղեցիկ ներշնչումներու, առանց սրոնց անարժէք պիտի ըլլար մտածումը և անկարող որևէ բարի գործի:

Նախ ազնիւ արդիւնքը ներկայացնել իբրև հիմնական մաս՝ և այսպէս ալ տղուն առողջ մտածումը որպէս միջոց լուսագոյն գործերու, ահա՛ ինչ որ կ'ուզէինք ըսել ներկայիս:

Այսօր, ի պատիւ Հ. Մ. Ը. Մ.ի լիազօր պատուիրակ Պր. Թ. Մեծաւրեանի, կը տրուի թէյասեղան մը Կեդր. Սկանուական Տան մէջ, Հ. Պ. Ս. Մ.ի Բանակներու կողմէ:

## Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ո Ւ Ե Ց Է Ք

Յաջորդի «Պատրաստ» Ս. Ծնունդի առթիւ լոյս կը տեսնէ կրկին ծաւալով, նոյն բովանդակութեամբ եւ պատկերազարդ. Գին՝ 5 Դրու:

## ԿԵՆՍԱԿԱՆ ՀԱՐՑ ՄԸ

Շատերու կողմէ մտածուած, յայտնաբերուած յիշողութեան և այնպէս ցարդ աննշմար մնացած հարցի մը մտածելու յանգգնութիւնը յանձն պիտի առնեմ և յայտնեմ իմ համեստ կարծիքս: Այդ կարևոր, նոյնիսկ կենսական հարցը շատ դիւրին և հեշտ չ'ըսեմ, երբ բարեկամեցողութիւնը չ'էր զիջող ոգին տիրապետեն անոնց մտորոնք նուիրական պատասխանատուութիւն մը ստանձնած են:

Ինչիւրը յայտնուեցաւ անշուշտ ընդհ. Հայ Սկսուտական Միութեան վրայ կ'անդրադառնայ, ճշմարիտ ու թիւն մը իզմիրի եւ Պօղոս Հայ ընկառնեալու միջև:

Այդ բոլոր արդէն հրապուրիչ բան մը ունի իր վրայ և մանաւանդ մեր համար, որ այնքան պէտք ունինք ռեզոլուտ համագործակցութեան և միացման, վասնզի մեր ազգային ոգու բարձր նկարագիրը խաթարող մեծագոյն թերութիւնը եղած է անմիաբանութիւնը, անհամեմատելիութիւնը: Այս պարագան այնքան ակնհերև է և անքառու ու մանաւանդ այնքան ճանաչուած, որ այլևս գիտակից սխալի մը կարգը անցած է և ունէ չ'մեղանք ընկերներ: Ուստի հասարակ (bana) բան մը պիտի ըլլայ անդրադառնալ կրկին և կրկին այդ ցաւալի կէտը վրայ, քանի որ մեզմէ իւրաքանչիւրը ահագին բաժին մը ունի այդ զիտակի թերութեանէ. հետևաբար արամբանական պիտի ըլլար, որ սկսուտիցմին ներշնչած եղբայրական գիշն առաջնորդուած՝ արմատախիչ ընկու ջանանք այժմէն այդ ունակութիւնը և յարմար առիթներ օգտագործելով արդէն իսկ յապաղած անհրաժեշտութիւն մը լրացնենք:

Ահա իմ համեստ կարծիքս, զոր կը յուսամ թէ պիտի իւրացուի նաև գիտակից և լրջախոհ ամէն անձէ, որ մանաւանդ անոնցմէ՝ որոնց վստահուած է արժանաւորապէս, տեղադրելու Հայ սկսուտական կազմակերպութեան ղեկը:

Արդէն այդ ցանկալի միութեան շուրջ բանակցութիւնները սկսած են Կ. Պոլսոյ լիազօր պատուիրակ՝ Պր. Թ. Մեծաւորեանի և տեղւոյս կազմակերպութեան միջև:

Մաղթենք որ գէթ այս անգամ յաջողին անոնք և այսպէս երեսուն և հինգ մասնաճիւղերով և շրջաններով իբր ընդհ. Հայ Սկսուտական Միութիւն մը մէկ ճակատ ներկայացնենք օտարին առջև:

Զ. Ա.

ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՐԿԱՍԵՆՆԳՐԱԿԱՆ ՎԷՊ

Գրեց՝ Mortimer Batten

III

Մինչ երկու քարձիւնները ձիւմի շարժ կը թռչէին վայրենի ճիւղեր ար- ձակելով, ձագուկները յուսահատական շնչերով կը պատասխանէին անոնց։

«Ձիւմ»... Արձիւ մը ձիւմի դէմքին մտեցաւ. այս վերջինը ծոցի իւր դէմքը և սկսաւ աւելի արագ ընթա- նալ... Սակայն անմիջապէս երկու արձիւնները միասին խոյացան անոր վրայ և ձիւմ տեսաւ անոնց ճիւղաննե- լը իր աչքերուն շատ մօտ... ու յան- թարձ ձակատագրական հարուածը ըս- տացաւ իր ճակտին վրայ։

Այդ վայրկեանին փոքր սկառւտ մը ակնարկ մը կը նետէր դէպի բոյ- ձը, ձամբան, երբ յանկարծ նշմարեց ձիւմի իյնալը ճամբուն վրայ և ար- ձիւկներն ու հեծելանիւրը լքելով սար- տակի շարժումներով փախչելը։

«Վագեցէք» գոչեց սկառւտը և դէպի դէպքին վայրը շտապելով քա- լեց թաշկինակը և զանոնք իր ըն- ձերներուն յանձնեց որոնք տեղաու- թեցին զանոնք մայրենական բոյնին մէջ։

Փոքր սկառւտը հեծաւ հեծելանիւրը և հեռացաւ...

Ժամ մը վերջ, դժբաղդ և յուսա- լքուած ձիւմ Գորին վրանին մօտեցաւ. սկառւտի մը զուարթ երգը լսեց և արձիւր տեսաւ որ իր ձագուկին սը- նունդ կը տանէր։

ձիւմի դէմքը բոլորովին վերաւոր- ուած էր. գլուխը վրանէն ներս ա- նաւ և սարսափեցաւ.

— Ո՛հ, ահա գարշելի՛ն, գոչեց մէկը.

— Ստահակը, մէջ բերաւ ուրիշ մը. և լուռ թիւն մը տիրեց.

— Ո՛ւր է հեծելանիւս մրմոաց ձիւմ.

— Մեր մօտ չէ՛ կրնաս փնտռել զայն.

— Նշմարեցի որ մայր արձիւրը իբր կեր իր ձագուկներուն կը հրամցնէր զայն. գուցէ նոր տեսակ կենդանի մը գտած ըլլալ կարծած է, մէջ բերաւ զուարթ ընկեր մը։

Կրկին լուռ թիւն տիրեց.

— Ո՛ւր է հեծելանիւս.

— Եթէ իրօք կ'ուզես իմանալ թէ մէկ է, իմացիր որ քաղաքագետին

մօտն է ան. եթէ շատ ազնուօրէն իր- մէ խնդրէիր...

— Է՛հ, անկիրթ լակտ, գոչեց ձիւմ սպառնական շնչով մը.

— Թերեւս, յարեց սկառւտ տռաշ- նորգը ժպտով մը, սակայն կը կար- ծեմ թէ խաղը շահեցանք այս անգամ»։

Իրօք, գարունը անցաւ և ամառը բաւական յառաջացած էր երբ տա- կաւին ձիւմ համարձակութիւնը չ'ու- նեցաւ իր հեծելանիւրը ուղելու։ Եւ երբ վերջապէս գնաց, բաւական ճըշ- մարտութիւններու վերահասու եղաւ։

Եւ այն օրը ձիւմ որոշեց կրկին ըս- կառւտ արձանագրուելի եթէ արտօնու- թիւն տրուի. քանի որ շատ լաւ հաս- կցաւ թէ՛ սկառւտի գլխին մէջ առաջի- նութիւն կայ։ (Վերջ)

Թարգմանեց Յրանուերեկն Ծ Ե Ր Վ Ա Գ Ր

Ս Կ Ա Ռ Ի Տ Ա Կ Ա Ն Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Հրդեհի մը պատճառ իմնց պէտք է ընել.

Եթէ տուն մը կ'սյրի, պարտաւոր էք 1. Արեւնցնէլ օնեցիները։

2. Անմիջապէս շուրջ մօտակայ պա- հականցը եւ հրշեջներու կայանը։

3. Սեպեղ յրացիները որպէսզի սան- ղուղներ, գորգեր եւ այլն բերել պատահականն անտառուները ազատելու համար։

Հրշեջներու հասնելէն վերջ, սկառւտե- ռու պարտականութիւնն է ուսիկանութեան օգնել անյոյր ջրուելու համար։

Եթէ տունն անոս մտնել անհրաժեշտ է սկստներ եւ կամ շնչաւեղման ազատելու հա- մար, պէտք է քաց քաշկիկակ մը կապել բեր- մին եւ քիւն եւ սուրկելով. անցնիլ սախա- կամածին շատ մօտէն։ Իսկ եթէ անհրաժեշտ է բացտրել կամ կայծերէ անցնիլ, պէտք է շա- նայ քաց կերպս մը տնէլ իր վրան։

ԲԻԹ

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ

ԱՆԳՆԻՈՅ ՄԷՋ

Անգլիոյ մէջ տռաշին անգամ ըլ- լալով Մանչեսթըրի համալսարանը ըս- կառւտ-մասթրրներ պատրաստելու համար դասընթացք մը հաստատած է։ Յայտագիրը պատրաստուեցաւ Ընդհ. Պետին և համալսարանի տես- չութեան համաձայնութեամբ։ Շատ հետաքրքրական հաւաքըյթներ տեղի ունեցան բազմաթիւ ուսիկներին որոն ներկայութեամբ Յառաջիկայ ամառ- նային շրջանին համար յատուկ բա- նակումներու կազմակերպութեան ձեռ- նարկուած է։

ՊԵՒՃԻԳԱՅԻ ՄԷՋ

Ն. Վ. ԱԼՊԵՐ՝ Թագաւոր Պելճի- գայի, Commandeur de l'ordre de la Couronneի պատուանշանը շնորհած է սկառւտի մը հիմնադիր և աշխարհի Ընդհ. Պետ՝ Մր. ՊԵՏՏԸՆ ԲԱՌԻԷԼԻ։

ԳԱՆԱՏԱՅԻ ՄԷՋ

Գանատայի սկառւտական կազմա- կերպութիւնը իր գործունէութեան տե- ղեկագիրը պատրաստած ըլլալով՝ ըս- կաած է ցրուել զոմանք աշխարհի միւս բոլոր կազմակերպութիւններուն։

Ըստ այդ տեղեկագրին, Գանատայի մէջ կան, 22690 սկառւտներ, 4288 կորիւններ (ուռոյժ-գրպ), 1648 խմբա- պետներ և 444 թագաւորական սկա- տուներ (գինկակառու)։

ՆԱԽՆԱԿԱՆ ԽՆԱՄՔ

Քիթի արիւնահոսութիւն

Քիթին վեր ֆաշել բէրրօրէր տը քէրով խառն ջուր (1 մաս բերրօրէր օր ֆէր 4 մաս ջուրով)։ Արիւնահոս ոռնեգին կողմի յազու- կը վեր բարձրացնել, զոյսը շիտակ բռնել։

Երկար շնչառութիւն մը կատարել կողմ- նակի ճնշելով այն ոռնեգին վրայ ուսկից ար- իւնը կը հոսի. շնչառութիւնը պէտք է ճեւ 5 կն 8 երկվայրկեան, եւ բերանը գոց։ Ասոր պէտք է անմիջապէս յաջորդ արտաշնչում մը բերանէն։ Այսպէս ֆակի մ'անգամ կրկնելով արիւնահոսութիւնը պիտի զարդի. հակառակ պարագային անմիջապէս բժիշկը կանչել։

Խախտում (ուկրի)

Նշան.— Ետճուռի ժամանակ ուկրագո- ղին վրայ ցաւ. մտնել ստիւն, ոռնեց եւ հաշտութիւն։

Դարման.— Անշուրտ պահելով անմիջապէս բժիշկ կանչել։

Իտրճուածք (ունդամի)

Նշան.— Սոսկայի ցաւ, ոռնեց, գրեթէ կատարեալ հաշտութիւն։

Դարման.— Աղի ջուրով յաճախ շփել. հաստակ կապով մը անշարժութեան մասնէլ. հակագիտ պահել եւ բժիշկին պատահականն համաձայն մասած ընել։ Պոյ-Սկառու

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ

Կ. Պոլսոյ Հայ Մարմնակրթական Ընդհ. Միութեան կողմէ լիազօր պատ- ուիրակ՝ Պր. Թ. Մեծատուրեան տեղս հասնելով սկսած է արգէն բանակցու- թիւններ վարել Իգմիրի Հայ Պոյ-Սկա- ուտներու կազմակերպութեան հետ, Պոլսոյ և Իգմիրի Հայ սկառւտներու միութեան շուրջ։

ԿԱՐԵՒՈՐ ԺՈՂՈՎ

Ներկայիս կը հրատարակուին Հ. Պ. Մ. Մ. ի բանակներու խմբագրութեան շատ կա- րեւոր ժողովի. վազը 9 Յունվար 1922, Երկուշաբթի իրիկուն ժամը ճիշդ 6,30ին, Հայ Ազգայնի մէջ։ Պիտի մասնակցի նաև Հ. Մ. Ը. Մ. ի լիա- զօր պատուիրակ՝ Պր. Թ. Մեծատուր- եան։ Ընդհ. Պետ՝ Մ. ԵԱՆԸԴԵԱՆ

ՍՏԱՑԱՆՔ Revue d'Education Natio- naleի 8րդ թիւը. բաժնեգրին տարե- կան 6,50 ֆր. Հասցէ՝ 38, rue Keller Paris (Xie).



# Մ Ա Ր Չ Ա Շ Ի Ա Ր Հ



Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ

## ՖՈՒԹՊՈՒԼ ՄԵՐ ՄԷՋ

### ՄԵՇ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐ

Առջի Կիրակի 23 Դեկտ. 1921 կե- սորէ վերջ ժամը 3ին Բանիօնիօսի դաշտին վրայ տեղի ունեցաւ Փութ- պօլի մրցում մը Հայկական Ա. և Անգ- լիական «Շարք» գրահաւորին նաւազ- ներուն միջև. Հայկական Խոււրքը Սի դեմ 9 կօրով յաղթական հանդիսացաւ:

## ՄԻՋՈՉԳԱՅԻՆ ԳԱԽԱԹԻ ՄՄՐՈՒՄՆԵՐԸ

### (ԳԱԽԱԹ՝ ԱՅՈՒՂՈՆ)

Կիրակի, 1 Յունվար 1922

Արօլլօնի գաշտ. — Հայկական Խոււ- րք մրցեցաւ Պարպէրիւնսի հետ. Հայ- կականը յաղթանակեց Օի դեմ 3 կօրով:

Բանիօնիօսի գաշտ. — Արօլլօնի Խոււրք մրցեցաւ Բանիօնիօսի հետ. Արօլլօնի յաղթանակեց Օի դեմ 4 կօրով:

Ա. Բ. Դ. Ի. Ե. Ք.

	Նիշ
Հայկական խաղացած	2 >
Արօլլօն	1 >
Պարպէրիւնս	1 >
Բանիօնիօս	1 >
Երկաթուղի	0 >

### ԱՅՍՈՐՈՒԱՆ ՄՐՏՈՒՄՆԵՐԸ

Բանիօնիօսի գաշտ. — Արօլլօնի — Պարպէրիւնս:

Արօլլօնի գաշտ. — Երկաթուղի — Բանիօնիօս:

«ՊԱՏՐԱՍ»Ի ԹԵՐՐՈՆԸ ԹԻՒ 5

## ՖՈՒԹՊՈՒԼԻ ՕՐԵՆՔՆԵՐ

(ՅԱՐԱԿԻՑ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ)

Գրեց. Մ. ԵԱՆԸԿԵԱՆ

(Ամփոփում)

### ՕՐԵՆՔ 6

Ունէ խաղացող, «խաղէ դուրս» (օֆ սայն) կը նկատուի, եթէ հակա- աակորդ կօլին մօտ գտնուի և ա- նոնցմէ երեք հոգի ներկայ չ'ըլլայ այդ միջոցին: Գօրնըր քիֆի, առքէ նեա- ուելով հակաաակորդի մը գնդակը դպ- չելու միջոցին, երբ գաշտին իր կող- մի կէտին մէջ գտնուի, ոչ մէկ խա- ղացող «խաղէ դուրս» (օֆ սայն) կը նկատուի:

Բացատրութիւն. — Ծաւթպօլի օ-

## ՖՈՒԹՊՈՒԼԻՍՏԻՆ ՍԻՒՆԱԿԸ

2.— (Օհանեան) — Բեկնթի քիֆի մը պահուել օ- րեկնթի իճեչպիս կրնայ գեղձանուիչ ևւ իճեչ և պահածը:

9.— Բէնյութի քիքի միջոցին բացի զարնողէն՝ ոչ ոք պէտք է 18 եարտա գծէն ներս գտնուի ևւ ոչ իսկ ներս խուժէ գնդակին զարնուելէն առաջ: Եթէ պաշտպանող կող- մէն ներս խուժին ևւ գնդակը ցանցին մէջ մտնէ իրաւարարը կօլ կը նկատէ ա- սիկա. իսկ եթէ ցանցէն դուրս անցնի ի- րաւարարը կրնայ կրկնել տալ հարուա- ծը. եթէ յարձակող կողմէն ներս խու- ժին ևւ կօլ ըլլայ՝ իրաւարարը չիղեալ կը նկատէ կօլը ևւ հարուածը կրկնել կօ- տայ, իսկ եթէ ցանցէն դուրս մննի, այդ կը պահուի ինչպէս սր է:

2.— (Սերոբ) — Ո՞րպիսի յանցանքներու հա- մար քեկնթի կը տուի:

9.— Նետուելով ինը յանցանքներու համար ո- բոնք կամաւոր կերպով կը գործուին կօլի 18 եարտա շրջապակին մէջ. — 1. Ոտք զարն Ի, 2. Կից տալ, 3. Չարնել, 4. Յատ- քիլ, 5. Չկարող գնդակը գնդակին, 6. Հա- կառակողը մը ծնողով բռնել, 7. Հրել հակառակողը մը, 8. «Չարն» տալ կոշտ ծնելով 9. Ետուելն սպարն» տալ:

2.— (Չառեկ) — Կարելի չէ՞ Պօլսոյ ևւ Իզմիրի մարզիկներէն ընդհանուր միութիւն մը կազմել:

9.— Անշուշտ է կարելի է, ևւ նոյնիսկ այժ- մէն զաղափար մը կայ Իզմիրի ևւ Պօլսոյ Հայ ֆութպօլիստներու խումբ մը Յու- նաստան զրկել մրցելու համար: Իզմիրի Հայ Ակումբը ևւ Պօլսոյ Հ. Մ. Բ. Մ. ք պարտաւոր են զորձակցիլ այս սուղուրբեամբ, ևւ ծրագրել մարզիկ- ցնք ուղարկելու 1921 ի Բարիզի Միջազգային Աղիմպիակային:

2.— (Զ. Ա.) — Ընդհանուր հայկական շիկ մը

ընէքներու ամենէն խրթինն է այս, ևւ հասարակ բացատրութեամբ կը ճանչցուի իբր օֆ սայնի օրէնք: Այս օրէնքը իր մանուածապատ իմաստով արգելք եղած է շատ մը խաղացող- ներու իրաւարարներ դառնալու, բայց փոքր ջանք մը ամէն ինչ հասկնալի կրնայ դարձնել: Երբ խաղացող մը գնդակէն առաջ կը գտնուի հաւանա- կան է որ օֆ սայն ըլլայ, իսկ երբ գնդակէն հտ կը գտնուի «Երբեք» օֆ սայն չկրնար ըլլալ, այս կէտը պէտք է մտքէ չհանել: Նոյնպէս ոչ մէկը կր- նայ օֆ սայն ըլլալ գօրնըր քիֆի ևւ ա- ուրքէ նետելու ժամանակ: Եթէ գնդա- կը հակառակորդի մը դպի ևւ գայ օֆ սայն գտնուող տղու մը, ան օֆ սայն չնկատուիր. այս պարագան շատեր չը- ւարեցուցած է, ևւ խաղի միջոցին ի- րաւարարը կը մեղադրուի անիրաւ

կազմել հետաւոր չէ:  
9.— Դժբաղդաբար ո՛չ: Մտղմէ՛ որ Հայաստա- նի նախաազիրը նպաստաւոր ըլլայ, մի- դի բաւ կարելի է կազմել պատկառելի ֆութպօլի լիկ մը, միացնելով բոլոր քա- ղաքնիքը:

## ՄՔՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԷՋ

ԳԱՐՓԱՆԹԻԷ Կրկին կը մրցի Վերջնականապէս որոշուեցաւ որ Գարփանթիի և Գուրի միջև պօքի մրցումը տեղի ունենայ Յունվար 12ին, Լօնտօնի մէջ:



## ՎԱՀՐԱՄ ԳՊՐԶԼԵԱՆ

Բաւած Գուլումեան քիւ 38 (Ֆրանկաց Թաղ)

Կը պատրաստէ նուրբ և յասակ փո- բազրութիւններ, Վաճառականական կնիքներ, քլիշէներ, անտէնեաներ, մօ- նօկրամներ և այլն:

Կը պատրաստէ ամէն կերպ ուկեղէն և արծաթեղէն գործեր, նուրբ և ճաշ- կաւոր:

Վաճառատան մէջ կը գտնուին նա- և ֆրիսքալ ակնոցներ այլազան տե- սակներով, փիւռն պլու և այլն:

տեղը: Իրաւարարը օֆ սայն կը նկա- տէ խաղացող մը ոչ թէ օֆ սայն վի- ճակի մէջ կեցած ըլլալուն, այլ երբ գնդակը դէպի անոր կը նետուի: Ունէ խաղացող կարող է օֆ սայն վիճակի մէջ մնալ ժամերով, պայմանաւ որ գնդակը դէպի իրեն չնետուի, բայց երբ գնդակը անոր կը զարնուի և ան կը ջանայ ունէ կղանակու մասնակցիլ խաղին իրաւարարը անմիջապէս կը դադրեցնէ խաղը և օֆ սայն կը յայ- տարարէ: Օրէնք 6ի վրայ, 1920ի ընդհ. ժողովով աւելցուեցաւ Առաջ նետելու միջոցին օֆ սայն չնկատուի պարագան, այնպէս որ աուրքի ժամա- նակ խաղացող մը կրնայ հանգաւոր սրտով օֆ սայն կենալ և ստիկը եղած կօլը կատարելապէս օրինաւոր կը հա- մարուի: (Շարունակելի)

ՏԳԱԳ. ԿԵՇԻՍԵԱՆ